ԱՆՁԻ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿԱՆ ԵՎ ԿԻՐԱՌԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ

(գիտական հոդվածների ժողովածու)

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԱՆՁԻ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿԱՆ ԵՎ ԿԻՐԱՌԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ

(գիտական հոդվածների ժողովածու)

Երևան
«ԱՍՈՂԻԿ»
2016

ՀՏԴ 159.923
ԳՄԴ 88.37
Ա 597

Հրատարակվում է Երևանի պետական համալսարանի փիլիսոփայության և հոգեբանության ֆակուլտետի գիտական խորհրդի երաշխավորմամբ

Գրախոս՝
հոգեբանական գիտությունների դոկտոր
ՌՈՒԲԵՆ ՆԱՂԴՅԱՆ

Գիտական խմբագիր՝
հոգեբանական գիտությունների թեկնածու
ՆԱՐԻՆԵ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Ա 597 **Անձի հոգեբանության տեսական և կիրառական հարցեր** (գիտական հոդվածների ժողովածու). - Եր.: «Ասողիկ» հրատ., 2016.- 280 էջ:

Սույն ժողովածուում ներկայացված են ԵՊՀ Անձի հոգեբանության ամբիոնի դասախոսների, ասպիրանտների և մագիստրոսների հոդվածները: Ժողովածուում ընդգրկվել են անձի հոգեբանության հիմնահարցերին վերաբերող տեսական և կիրառական բնույթի հոդվածներ: Դիտարկվում են անձի ձևավորման և կայացման գործում զարգացման, սոցիալական, մշակութային և էքզիստենցիալ խնդիրներ:

Հոդվածների ժողովածուն կարող է օգտակար լինել անձի հոգեբանության ոլորտով հետաքրքրված մասնագետների և ուսանողների համար:

ՀՏԴ 159.923
ԳՄԴ 88.37

ISBN 978-9939-50-308-0

© Երևանի պետական համալսարան, 2016
© Խաչատրյան Ն. (խմբ.), 2016

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԱՌԱՋԱԲԱՆ 5

ԱՆՁԻ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅԱՆ ՆՈՐ ԿՈՂՄՆՈՐՈՇՈՒՄՆԵՐ

Նարինե Խաչատրյան
ԱՆՁԻ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆՆ ԱՅՍՕՐ. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՄԱՆ ԱՌԱՐԿԱՆ ԵՎ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐԸ 9

Սվետլանա Հարությունյան
ՆԱՐԱՏԻՎ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ. ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ, ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԿԻՐԱՌԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ 16

ԱՆՁ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ

Լիլիթ Գարգրցյան
ՍԵՓԱԿԱՆ ՏԱՐԻՔԻ ԸՆԿԱԼՈՒՄՆ ՈՒ ԴՐԱ ՆԿԱՏՄԱՄԲ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔԸ ՀԱՍՈՒՆՈՒԹՅԱՆ ՓՈՒԼՈՒՄ 33

Իրինա Խանամիրյան
ԾՆՈՂԱԿԱՆ ՀՐԱՀԱՆԳՆԵՐԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՆԱՑԻՈՒԹՅԱՆ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՎՐԱ 42

Էլեոնորա Զաքարյան, Մարինե Միքայելյան
ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆ ԲԱԶՄԱԲՆՈՒՅԹ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԿԻՐԱՌԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՏՈՒԿ ԿԱՐԻՔՆԵՐ ՈՒՆԵՑՈՂ ԵՐԵԽԱՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ 49

Սոսե Խաչիբաբյան
ՍՏԵՂԾԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԳՈՐԾՈՆՆԵՐԸ ԿՐՏՍԵՐ ԴՊՐՈՑԱԿԱՆ ՏԱՐԻՔՈՒՄ 61

Մանե Տոնոյան
ԾԵՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՊԱՏԿԵՐԱՑՈՒՄՆԵՐԸ ՄԻՋԻՆ ՀԱՍՈՒՆՈՒԹՅԱՆ ՓՈՒԼՈՒՄ 68

Կարինե Հարությունյան
ՆԿԱՐԻ ԴԵՐԸ ԵՎ ՊԱՏԿԵՐՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԱՆԿՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ 77

Արմինե Հայրապետյան, Լիլիթ Գարգրցյան
ԿԱՊՎԱԾՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿԻ ԵՎ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԲԱՐԵԿԵՑՈՒԹՅԱՆ ՓՈԽԿԱՊՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՏԱՐԻՔՈՒՄ 84

ԱՆՁ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ

Աննա Հակոբջանյան
ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՎԱՐՔԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՄԱՆ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԸ 97

Լիանա Սարգսյան, Սվետլանա Հարությունյան
ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ ԱՐԺԵՔԱՅԻՆ ԿՈՂՄՆՈՐՈՇԻՉՆԵՐԻ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԻՆՔՆՈՒԹՅԱՆ ՓՈԽԿԱՊՎԱԾՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 113

Լիլիթ Ավետիսյան, Սոնա Մանուսյան
ԿԱՄԱՎՈՐԻ ՕԳՆՈՂԱԿԱՆ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄՆԵՐՆ ԱՆՁԻ ՆՈՒՅՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔՈՒՄ 128
Քնարիկ Առաքելյան
ԱՆՁԻ ԶՈՀԱՅՆՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ՄԻՋԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐ 145
Մարիաննա Գևորգյան, Նարինե Խաչատրյան
ՍՈՒԲՅԵԿՏԻՎ ԲԱՐԵԿԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱՅՆ ՊԱՅՄԱՆԱՎՈՐՈՂ ԳՈՐԾՈՆՆԵՐԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ ՇՐՋԱՆՈՒՄ 153
Անժելա Աֆյան, Նարինե Խաչատրյան
ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՎԱՐՔԻ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 163

ԱՆՁ ԵՎ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԽՆԴԻՐՆԵՐ

Սոնա Մանուսյան
ԱԶԳԱՅԻՆ ԻՆՔՆՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼ-ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԸՄԲՌՆՈՒՄԸ 179
Նվարդ Գրիգորյան, Աննա Հակոբջանյան, Մերի Գրիգորյան
ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԱՍԱՑՎԱԾՔՆԵՐԸ ՈՐՊԵՍ ՀԱՄՈԶՄՈՒՆՔՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՀԻՄՔԵՐ 193
Աստղիկ Սերոբյան
ԱՆՁՆԱՅԻՆ ԳԾԵՐ ԵՎ ԱՈՒՏՈԿԱՐԾՐԱՏԻՊԵՐ. ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԵՐԻ, ՀՈՒՅՆԵՐԻ ԵՎ ԱՍՈՐԻՆԵՐԻ ՕՐԻՆԱԿՈՎ 210
Անուշ Մկրտչյան
ԱՐԺԵՔՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՄԱՆ ՏԵՍԱԿԱՆ ԵՎ ԿԻՐԱՌԱԿԱՆ ԱՍՊԵԿՏՆԵՐԸ 227
Անի Մովսիսյան, Նարինե Խաչատրյան
ՈՐՈՇ ԱՆՁՆԱՅԻՆ ՓՈՓՈԽԱԿԱՆՆԵՐԻ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ ՏԱՐԲԵՐ ՄՇԱԿՈՒՅԹՆԵՐՈՒՄ ՍՈՑԻԱԼԱԿԱՆԱՑՈՒՄ ԱՆՑԱԾ ՀԱՅ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ ՕՐԻՆԱԿՈՎ 238

ԱՆՁ ԵՎ ԷՔԶԻՍՏԵՆՑԻԱԼ ԽՆԴԻՐՆԵՐ

Լուսինե Աղաբեկյան
ՄԱՀՎԱՆ ՀԵՏ ԲԱԽՈՒՄԸ՝ ՈՐՊԵՍ ԷՔԶԻՍՏԵՆՑԻԱԼ ՓՈՐՁԱՌՈՒԹՅՈՒՆ 257
Նարինե Ադամյան, Իրինա Խանամիրյան
ԱՌՈՂՋԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ ՈՒՆԵՑՈՂ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՄԱՅՐԵՐԻ ԱՐԺԵԻՄԱՍՏԱՅԻՆ ՈԼՈՐՏԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 263
Կարինե Գրիգորյան
ԵՐԵԽԱՆԵՐԻ ՄԱՀՎԱՆ ՎԱԽԻ ՖԵՆՈՄԵՆՈԼՈԳԻԱՆ. ՏԱՐԲԵՐ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ 273

ՍՈՒԲՅԵԿՏԻՎ ԲԱՐԵԿԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱՅՆ ՊԱՅՄԱՆԱՎՈՐՈՂ ԳՈՐԾՈՆՆԵՐԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ ՇՐՋԱՆՈՒՄ

Մարիաննա Գևորգյան
Նարինե Խաչատրյան

Առհասարակ, արագ զարգացող և տեխնիկական առաջընթաց գրանցող հասարակություններում աստիճանաբար ավելի են կարևորվում երջանկության, բարեկեցության խնդիրները, ինչպես նաև ինֆորմացիոն դարում առավել արժևորվում են այն սուբյեկտիվ գործոնները, որոնք մարդուն կտան առավել մեծ բավարարվածություն: Սովորաբար, մարդկանց բարեկեցությունն ուսումնասիրվում է զանազան հետազոտությունների միջոցով, սակայն այն չափվում է օբյեկտիվ չափանիշներով (օրինակ, ՀՆԱ-ն, հասարակության առողջական վիճակը, միջին աշխատավարձը, կրթվածության աստիճանը և հասարակական կյանքը բնութագրող այլ ինդեքսներ), ուստի, անհրաժեշտություն է առաջանում ուսումնասիրել մասնավորապես մարդկանց սուբյեկտիվ գնահատումն իրենց բարեկեցության վերաբերյալ: Հետազոտություններ կան, որտեղ դուրս է բերվում, որ կյանքի բարձր որակը դեռևս չի պայմանավորում սուբյեկտիվ բարեկեցության բարձր մակարդակ, հետևաբար, սա ևս ցույց է տալիս, որ բացի օբյեկտիվ ցուցանիշներից՝ կարևորվում է սուբյեկտիվ բարեկեցությունը [1]:

Չնայած այսօր իրականացվում են բազմաթիվ հետազոտություններ սուբյեկտիվ բարեկեցության վերաբերյալ, դրանք մասնակի կերպով են ուսումնասիրում վերոհիշյալ երևույթը՝ անդրադառնալով նրա առանձին բաղադրիչներին կամ դիտարկելով այն որպես գործոն այլ հոգեբանական երևույթների արտահայտման մեջ:

Մեր երկրի պայմաններում՝ տնտեսական, քաղաքական, մշակութային փոփոխությունների դաշտում, հետաքրքիր է տեսնել սուբյեկտիվ բարեկեցությունը պայմանավորող գործոնների առանձնահատկություններ: Սույն հոդվածում մենք ներկայացնելու ենք *երիտասարդների սուբյեկտիվ բարեկեցության բաղադրիչների արտահայտվածության և դրանք պայմանավորող գործոնների փոխհարաբերության առանձնահատկությունները:*

Սուբյեկտիվ բարեկեցություն հասկացության վերլուծություն

Գոյություն ունեն սուբյեկտիվ բարեկեցությունը բնութագրող տարբեր հասկացություններ: Սուբյեկտիվ բարեկեցության հետ մեկտեղ հաճախ օգտագործվում են հոգեբանական բարեկեցություն, կյանքից բավարարվածություն, կյանքի որակ հասկացությունները [5, 7]:

Հոգեբանական բարեկեցություն հասկացությունը վերլուծելիս հեղինակներն անդրադառնում են մարդու՝ ինքն իր և սեփական կյանքի սուբյեկտիվ գնահատմանը՝ շեշտադրելով անձի դրական ֆունկցիոնալության երևույթը: Ըստ այդմ, Ք. Ռիֆն առանձնացրել է հոգեբանական բարեկեցության 6 հիմնական բաղադրիչներ՝ ավտոնոմիա, շրջապատող միջավայրի կառավարում, անձնային աճ, դրական հարաբերություններ շրջապատողների հետ, կյանքի նպատակների առկայություն, ինքնընդունում [մեջբերվում է ըստ 2]: Այս տեսանկյունից դիտարկելիս կարող ենք ասել, որ հոգեբանական բարեկեցությունը չափելու համար մեզ կրկին անհրաժեշտ է սուբյեկտի տված գնահատականը, այսինքն՝ սուբյեկտն ինքն է գնահատում իր հոգեբանական բարեկեցությունը, որն էլ մենք անվանում ենք սուբյեկտիվ բարեկեցություն: Կարելի է ասել, որ երջանկություն եզրույթը սուբյեկտիվ բարեկեցության փիլիսոփայական արտահայտումն է [4]: Իսկ կյանքի որակը վերաբերում է հասարակության սոցիալ-տնտեսական վիճակին: Վերոնշյալի վերաբերյալ Շամինովը գրում է. «Սուբյեկտիվ բարեկեցությունը հասկացություն է, որն արտահայտում է մարդու սեփական վերաբերմունքն իր անձին, կյանքին և այն գործընթացներին, որոնք նրա համար կարևոր նշանակություն ունեն՝ արտաքին և ներքին բարեկեցության վերաբերյալ յուրացված պատկերացումների տեսանկյունից» [մեջբերվում է ըստ 3, էջ 14]: Հետևաբար, կարելի է ասել, որ սուբյեկտիվ բարեկեցությունը ներառում է վերը նշված գրեթե բոլոր բնորոշումները և անձի՝ իր իսկ կողմից տրված գնահատականն է իր բարեկեցությանը:

Ընդունելով սուբյեկտիվ բարեկեցության Ի. Դիների սահմանումը, որ «սուբյեկտիվ բարեկեցության գնահատումը ենթադրում է կյանքի տարբեր հանքամանքներին տրվող կոգնիտիվ և հուզական հակազդումներ» [7, էջ 66], տվյալ ուսումնասիրության մեջ մենք շեշտը դնում ենք անձի սուբյեկտիվ գնահատման վրա, քանզի մարդը մի շարք օբյեկտիվ չափանիշներով կարող է թվալ երջանիկ, բայց իրականում իրեն չզգա այդպիսին:

Մեր նախնական ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ երիտասարդների պատկերացումները երջանկության և կյանքից բավարարվածության վերաբերյալ հիմնականում պատկանում են հետևյալ ոլորտներին[1].

[1] Ոլորտները ներկայացված են ըստ կարևորության:

1. *Ֆինանսներ* - այս կատեգորիայի մեջ ներառվում են բարձր աշխատավարձի, շքեղ կյանքի, ճոխություններ թույլ տալու, առանց խնայելու գումար ծախսելու անհրաժեշտությունները:
2. *Առողջություն* - կարևորվում է հատկապես հարազատների առողջ լինելը: Այս կատեգորիայի մեջ է մտնում նաև երեխաների և ծնողների առողջական վիճակի կարևորությունը, որը ևս ավելի շատ է թվարկվում, քան սեփական առողջությունը:
3. *Միջանձնային հարբերություններ* - սիրված լինել, գնահատվել շրջապատողների կողմից, ունենալ լավ ընկերներ:
4. *Հասարակական (հանրօգուտ վարք)* - որևէ կարևոր բան անել մյուսների համար, օգնել շրջապատող մարդկանց, նպաստել մարդկանց ավելի լավը լինելուն:
5. *Ընտանիք* – լինել ընտանիքի անդամների կողքին, ամուսնանալ, ունենալ երեխաներ, սիրված լինել կողակցի կողմից, ունենալ հավատարիմ և սիրող ամուսին:
6. *Կարիերա* - ունենալ հետաքրքիր, սիրված, լավ աշխատանք, անել որևէ կարևոր բան մասնագիտության համար և մասնագիտական բնագավառում ներդրում ունենալ:
7. *Անձնային աճ* - այստեղ հատկապես շեշտադրվել են ճանապարհորդելը, շրջագայելը տարբեր վայրերում, իսկ զարգացածությունը և ինքնակատարելագործումն ավելի քիչ էին շեշտադրված:
8. *Կարևոր և հարազատ մարդկանց երջանկություն և հաջողություն:*
9. *Սեփական ձգտումների իրականացում:*
10. *Խաղաղություն երկրում և աշխարհում:*
11. *Հոգեբանական հանգստություն*- ներդաշնակություն, ինքնավստահություն սեփական ուժերի նկատմամբ:
12. *Արտագաղթ* - գնալ Հայաստանից, ապրել և աշխատել այլ երկրում:
13. *Արդարություն երկրում* - օրենքի ուժ, «բարոյական» մարդիկ, քաղաքացիական ապահովություն, այն, որ ամեն մարդ իրեն արժանիին հասնի:
14. *Ազատություն* - անկախություն և ազատություն ծնողներից, միայնակ ապրելու հնարավորություն:

Հետազոտության առարկայի նկարագրությունը

Սույն հետազոտության մեջ հիմք ենք ընդունել ՏՀԶԿ-ի[2] կողմից սուբյեկտիվ բարեկեցության չափման մեթոդական ցուցումները, որոնցում

[2] Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպություն (Organization for Economic Cooperation and Development, OECD) http://www.wikiprogress.org/index.php/Subjective_Well-being

սուբյեկտիվ բարեկեցության չափման համար առանձնացվում են հետևյալ բաղադրիչները.

- կյանքից բավարարվածության գնահատում (ընդհանուր բավարարվածություն, ինչպես նաև կյանքի տարբեր ոլորտներից բավարարվածությունը, օրինակ՝ կենսամակարդակով, հարաբերություններով և այլն),
- հուզական վիճակի գնահատում (դրական և բացասական հույզերի առկայությունը և ապրման հաճախականությունը),
- էվդեմոնիան (սոցիալական և հոգեբանական բարեկեցության գնահատում, որը հիմնականում վերաբերում է ինքնիրացմանը և ներանձնային գործոններին, ինչպիսիք են՝ անձնային աճ, ինքնավարություն, կոմպետենտության զգացում, սոցիալական ընդգրկվածություն և այլն):

Որպես սուբյեկտիվ բարեկեցության համար նշանակալի *գործոններ* տվյալ հետազոտության համար ընտրվել են նյութական վիճակը, առողջական վիճակը, աշխատանքային կարգավիճակը և մշակութային կողմնորոշիչները՝ ուղղահայաց ինդիվիդուալիզմը և կոլեկտիվիզմը, հորիզոնական ինդիվիդուալիզմը և կոլեկտիվիզմը:



Նկար 1. Սուբյեկտիվ բարեկեցության պարզ մոդել[3] [10]

Այսպիսով, տվյալ հետազոտության մեջ փորձ է կատարվել դուրս բերել նյութական վիճակի, առողջական վիճակի, աշխատանքային կարգավիճակի և մշակութային կողմնորոշիչների (ինդիվիդուալիզմ-կոլկտիվիզմ) փոխկապվածությունը սուբյեկտիվ բարեկեցության տարբեր բաղադրիչների հետ:

[3] Ոլորտները ներկայացված են ըստ կարևորության:

Հետազոտության իրականացման համար կիրառել ենք հետևյալ մեթոդիկաները.

1. Հարցարան *նյութական, առողջական և աշխատանքային կարգավիճակի* գնահատման համար:
2. *Անձնային բարեկեցության ինդեքս* հարցարան [6]: Այն դուրս է բերում ընդհանուր առմամբ կյանքից բավարարվածության և կյանքի տարբեր ոլորտներից բավարարվածության մակարդակը՝ կենսամակարդակ, առողջություն, ձեռքբերումներ, ապահովվածության զգացում, համայնքին անդամակցության զգացում, անվտանգության զգացում ապագայի հանդեպ, կրոն:
3. *Հոգեկան առողջության կոնտինիում* հարցարան[4], որը ներառում է 3 հարց հուզական բարեկեցությունը, 6 հարց հոգեբանական բարեկեցությունը և 5 հարց սոցիալական բարեկեցությունը չափելու համար [9]: Հոգեբանական բարեկեցության հարցերի բլոկը հիմնված է Ք. Ռիֆի առանձնացրած բաղադրիչների վրա (ինքնընդունում, ուրիշների հետ դրական հարաբերություններ, անձնային աճ, ավտոնոմիա, կյանքի նպատակ, շրջակա միջավայրի վերահսկում), իսկ սոցիալական բարեկեցության հարցերի բլոկը կազմված է Քեյի սոցիալական բարեկեցության մոդելի հիման վրա (ներդրում, ներառվածություն, զարգացում, ընդունվածություն, կոհերենտություն):
4. *Հ. Տրիանդիսի կողմից մշակված «Մշակութային կողմնորոշիչների»* հարցարան [8]: Այն դուրս է բերում ուղղահայաց և հորիզոնական ինդիվիդուալիզմը և կոլեկտիվիզմը:

*Հորիզոնական ինդիվիդուալիզմ*ը այն մշակութային կողմնորոշումն է, երբ մարդն ընկալվում է ինքնավար, ինքնուրույն՝ ունենալով այն համոզմունքը, որ մարդկանց հավասարությունն իդեալական սոցիալական նորմ է:

Ուղղահայաց ինդիվիդուալիզմը այն մշակութային կողմնորոշումն է, երբ ընկալվում է ինքնավար, ինքնուրույն, սակայն ընդունելով այն համոզմունքը, որ մարդիկ հավասար չեն միմյանց:

Հորիզոնական կոլեկտիվիզմն այն մշակութային կողմնորոշումն է, երբ մարդն ընդունվում է որպես կոլեկտիվի, համայնքի անդամ՝ ունենալով այն համոզմունքը, որ խմբի բոլոր անդամները հավասար են միմյանց:

Ուղղահայաց կոլեկտիվիզմն այն մշակութային կողմնորոշումն է, երբ մարդն ընդունվում է որպես կոլեկտիվի, համայնքի անդամ՝ ունենալով այն

[4] Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպություն (Organization for Economic Cooperation and Development, OECD) http://www.wikiprogress.org/index.php/Subjective_Well-being

համոզմունքը, որ խմբի անդամների միջև կարող է և պետք է լինի հիերարխիա և հնարավորությունների անհավասարություն:

Հետազոտության ընտրանքը 25-35 տարեկան երիտասարդներ են: Հետազոտվողների քանակն էր՝ 80 մասնակից, որից 50-ը՝ իգական և 30-ը՝ արական սեռի ներկայացուցիչներ:

Արդյունքների վերլուծությունը և մեկնաբանությունը

Ներկայացնենք հետազոտության արդյունքում ստացված կորելյացիոն կապերը:

Աղյուսակ 1. **Կյանքից բավարարվածության և սուբյեկտիվ բարեկեցության դետերմինանտների փոխկապվածություն**

	Ընդհանուր բավարարվածություն	Կենսամակարդակ	Առողջություն	Ձեռքբերումներ	Հարաբերություններ	Սպասելիության գնահատում	Համայնքի անդամ լինելու զգացում	Անվտանգություն	Հոգևոր կյանք/կրոնով
Նյութական վիճակ	.552**	.551**	.260*	.468**	.397**	.416**	.225*	.435**	_
Առողջական վիճակ	.244*	.262*	.659**	.222*	.419**	.270*	.457**	.265*	.436**
Աշխատանքային կարգավիճակ	.321**	.227*	_	.458**	.227*	.243*	_	.227*	_
Ուղղահ. Կոլեկտիվիզմ	.251*	_	_	.224*	_	.269*	.236*	_	.365**
Հորիզոն. Կոլեկտիվիզմ	_	_	_	_	_	_	_	_	.305**
Ուղղահ. Ինդիվիդուալիզմ	_	_	_	_	_	_	_	_	_
Հորիզ. Ինդիվիդուալիզմ	_	_	_	_	_	_	.235*	_	.253*

**p≤ 0.01; *p ≤ 0.05

Ինչպես երևում է աղյուսակից, նյութական վիճակը, առողջական վիճակը, աշխատանքային կարգավիճակը, ինչպես նաև ուղղահայաց կոլեկտիվիզմը որպես մշակութային կողմնորոշում պայմանավորում են ընդհանուր առմամբ կյանքից բավարարվածությունը: Նյութական վիճակը

նշանակալի փոխկապակցված է կյանքից բավարարվածության բոլոր ոլորտների հետ, բացառությամբ հոգևոր կյանքով/կրոնով բավարարվածությունից: Թեպետ նյութական բարեկեցությունը սուբյեկտիվ բարեկեցությունը պայմանավորող գործոն է և՛ ցածր, և՛ բարձր կենսամակարդակ ունեցող երկրների համար, սակայն ուսումնասիրությունները փաստում են, որ սուբյեկտիվ բարեկեցության համար հարստությունն առավել ազդեցիկ գործոն է աղքատ երկրներում [7]:

Առողջական վիճակը ևս փոխկապակցված է կյանքից բավարարվածության բոլոր ոլորտների հետ: Աշխատանքային կարգավիճակը, այն, թե մարդը որքանով է գնահատվում իր աշխատանքային կարգավիճակով, ևս փոխկապակցված է կյանքի տարբեր ոլորտներից բավարարվածության հետ (կենսամակարդակ, ձեռքբերումներ, հարաբերություններ, ապահովության զգացում, ապագայի նկատմամբ անվտանգություն):

Ինչ վերաբերում է մշակութային կողմնորոշիչների և կյանքից բավարարվածության կապին, ապա այստեղ կապը նշանակալի է միայն ուղղահայաց կոլեկտիվիզմի դեպքում: Կարող ենք ասել, որ ուղղահայաց կոլեկտիվիզմի արտահայտվածությունը պայմանավորում է կյանքով բավարարվածության բարձր մակարդակ: Սա նշանակում է, որ երբ մարդիկ ընդգծում են խմբի ամբողջականությունը, պատրաստ են զոհաբերել իրենց նպատակները հանուն խմբի նպատակների, կարող են անել այն, ինչն իրենց տհաճ է հանուն խմբի, ընդ որում՝ հարկ է նշել, որ տվյալ խմբում կան հիերարխիկ հարաբերություններ, ապա այս պարագայում երիտասարդների կյանքից բավարարվածությունն ավելի բարձր է, մասնավորապես, երիտասարդներն ավելի բավարարված են իրենց զգում ձեռքբերումներով, համայնքում ներգրավվածությամբ, ապահովության զգացմամբ և հոգևոր կյանքով: Հորիզոնական կոլեկտիվիզմը փոխկապված է միայն հոգևոր կյանքից բավարարվածության, իսկ հորիզոնական ինդիվիդուալիզմը՝ հոգևոր կյանքի և համայնքում անդամակցության զգացման հետ: Այս արդյունքները հետաքրքիր են, քանի որ հորիզոնական ինդիվիդուալիզմը և կոլեկտիվիզմը, որպես մշակութային կողմնորոշիչներ, շեշտադրում են հավասարության գաղափարը՝ որպես անհատ և որպես խմբի անդամ:

Այժմ ներկայացնենք սուբյեկտիվ բարեկեցության մյուս բաղադրիչների՝ հուզական, հոգեբանական և սոցիալական բարեկեցության փոխկապվածությունը միևնույն գործոնների հետ:

Աղյուսակ 2. **Սուբյեկտիվ բարեկեցության բաղադրիչների և այն պայմանավորող դետերմինանտների փոխկապվածությունը**

	Հուզական բարեկեցություն	Սոցիալական բարեկեցություն	Հոգեբանական բարեկեցություն	Ընդհանուր բարեկեցություն
Նյութական վիճակ	.371**	.262*	.326**	.346**
Առողջական վիճակ	.295**	.254*	.240*	.315**
Աշխատանքային կարգավիճակ	.278*	.307*	-	.298**
Ուղղահայաց կոլեկտիվիզմ	-	-	-	-
Հորիզոնական կոլեկտիվիզմ	-	-	-	-
Ուղղահայաց ինդիվիդուալիզմ	-	-	-	-
Հորիզոնական ինդիվիդուալիզմ	-	-	-	-

**p≤ 0.01; *p ≤ 0.05

Հետաքրքրական է այն փաստը, որ այստեղ ևս առկա է կապ նյութական բարեկեցության և սուբյեկտիվ բարեկեցության բոլոր բաղադրիչների (հուզական, սոցիալական, հոգեբանական) միջև, ընդ որում՝ առավել ուժեղ կապ առկա է նյութական կարգավիճակի և հոգեբանական ու հուզական բարեկեցության միջև: Նյութական, առողջական վիճակի և աշխատանքային կարգավիճակի բարձր մակարդակը պայմանավորում են ուրախության, կյանքով հետաքրքրվածության ապրումները, ինչպես նաև ներանձնային, անձի զարգացման համար կարևոր փոփոխականներ, ինչպես, օրինակ, ինքնընդունում, նպատակաուղղվածություն, անձնային աճ և այլն: Հետաքրքրական է, որ հոգեբանական բարեկեցությունը փոխկապված չէ տվյալ ընտրանքի դեպքում ինդիվիդուալիզմի կողմնորոշման հետ, քանի որ վերջինիս դեպքում խրախուսվում են անհատի ինքնավարությունը և ինքնուրույնությունը: Որոշ ուսումնասիրություններում նշվում է, որ անձնային կոնգրուենտությունը, տարբեր իրավիճակներում անձնային վարքի կայունությունը հատուկ է արևմտյան մշակույթներին, և դրա հետևանքով սուբյեկտիվ բարեկեցությունը բարձր է կորելացվում ինդիվիդուալիզմի հետ հենց արևմտյան և ոչ արևելյան մշակույթներում [նույն տեղում]: Այն, որ տվյալ ուսումնասիրության մեջ հուզական, հոգեբանական, սոցիալական բարեկեցությունը փոխկապված չէ որևէ մշակութային կողմնորոշման հետ, մեզ հուշում է, որ երիտասարդների սոցիալականացման մեջ հատուկ շեշտադրված չեն ինդիվիդուալիզմի կամ կոլեկտիվիզմի տարրերը:

Ամփոփում

Երիտասարդների՝ իրենց կյանքից բարարվածության, ինչպես նաև հուզական, հոգեբանական, սոցիալական բարեկեցության համար նշանակալի գործոններ են նյութական վիճակը, առողջական վիճակը և աշխատանքային կարգավիճակը:

Կարծում ենք, որ այս արդյունքները, հատկապես նյութական վիճակի դերը ձեռքբերումների, ապահովվածության, համայնքին անդամակցության, ապագայի հանդեպ անվտանգության զգացման բավարարվածության, ինչպես նաև հուզական, հոգեբանական և սոցիալական բարեկեցության համար պայմանավորված են մեր հասարակության մեջ առկա տնտեսական խնդիրներով և սոցիալական անարդարության դրսևորումներով:

Կյանքից բավարարվածության և մշակութային կողմնորոշիչների միջև եղած կապերը նկատելի են միայն ուղղահայաց կոլեկտիվիզմի դեպքում, այսինքն՝ ուղղահայաց կոլեկտիվիզմի բարձր մակարդակի դեպքում կյանքից բավարարվածությունը ևս բարձր է: Սակայն, միևնույն ժամանակ, մշակութային կողմնորոշումները, այդ թվում՝ ուղղահայաց կոլեկտիվիզմը, ազդեցություն չեն ունենում անձի հուզական, հոգեբանական և սոցիալական բարեկեցության համար: Կարծում ենք, որ այս տվյալները հուշում են, որ ուղղահայաց կոլեկտիվիզմը, որպես մշակութային կողմնորոշիչ, ավելի շուտ նպաստում է անձի սոցիալական ադապտիվությանն առկա սոցիալ-տնտեսական և սոցիալ-քաղաքական պայմաններում, քան դիտարկվում է որպես ներքնայնացված սուբյեկտիվ նորմ:

Կարծում ենք, որ տվյալ ուսումնասիրությունն ունի ընդլայնման անհրաժեշտություն՝ սուբյեկտիվ բարեկեցությունը պայմանավորող տարբեր գործոնների համադրության միջոցով ընտրելով ավելի մեծ համախումբ և կատարելով միջխմբային համեմատություններ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. **Леонтьев, Д.** Субъективное благополучие и качество жизни: подходы, критерии и индикаторы, *Научно-учебная группа позитивной психологии и качества жизни,* 2011. Հասանելի է http://www.hse.ru/org/projects/47266005
2. **Позднякова, Е.** Понятие феномена «психологическое благополучие» в современной психологии личности. *Психологический журнал*, N 3, 2007, с. 24-32.
3. **Бояркин, М., Долгополова, О. и др**. *Психологическое и профессиональное благополучия государственных служащих*, Волгоград, Изд-во ФГОУ ВПО ВАГС, 2007.

4. **Пучкова, Г.** *Субъективное благополучие как фактор самоактуализации личности.* Автореферат канд. дис., 2003. Հասանելի է http://www.dissercat.com/content/subektivnoe -blagopoluchie-kak-faktor-samoaktualizatsii-lichnosti
5. **Фесенко, П.** *Осмысленность жизни и психологическое благополучие личности,* Институт психологии им. Л.С. Выготского Российского государственного гуманитарного университета, 2005. Հասանելի է http://www.childpsy.ru/dissertations/id/19919.php
6. **Cummins, R., et al.** The Australian Unity Wellbeing Index: 2004 update. In *6th Australian Conference on Quality of Life, The Australian Centre on Quality of Life*, Deakin University 2004. Հասանելի է http://www.deakin.edu.au/research/acqol/instruments/wellbeing-index/index.php
7. **Diener, E., Lucas, E., Shigehiro, O.** Subjective well-being. The Science of Happiness and Life Satisfaction, in Shane J. Lopes & C.R. Snyder (eds) *The Oxford handbook of Positive Psychology,* 2012, pp. 63-73, DOI:10.1093/oxfordhb/9780195187243.013.0017.
8. **Triandis, H. C. & Gelfland, M**. Converging measurement of horizontal and vertical individualism and collectivism. *Journal of Personality and Social Psychology,* N74, pp. 118-128.
9. **Lamers, S., Westerhof, G. J., Bohlmeijer, E. T., ten Klooster, P. M., & Keyes, C. L.** Evaluating the psychometric properties of the mental healt Continium-Short Form (MHC-SF), *Journal of Clinical Psychology,* 67(1), pp. 99-110.
10. OECD, M. *OECD Guidelines on Measuring Subjective Well-being*, OECD Publishing, 2013. Հասանելի է *http://dx.doi.org/10.1787/9789264191655-en*